

ՀՏԴ 94(430.2:159.9) Պատմություն
ԳԵՐՄԱՆԱՑԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ և ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
Գևորգ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Г. Мелконян
НЕМЕЦКИЕ ОФИЦЕРЫ И АРМЯНСКИЙ ГЕНОЦИД

В данной статье обсуждается роль Кайзеровской Германии в деле Армянского геноцида в годы Первой мировой войны со стороны изучения германской исполнительности во время Армянского геноцида, очень важно выяснение деятельности немцев, которые находились в Турции в годы Первой мировой войны.

Данная статья пытается подтвердить тот факт, что некоторые немецкие офицеры не только одобряли деятельность Молодых турков против армян, но и имели участие в деле Армянского геноцида и в угнетение армянских самооборонительных боев.

G. Melkonyan
German officers and Armenian Genocide

The article discusses the question about the role played by the Imperial German officers in the Armenian Genocide during World War I. From the point of view of the investigation on Imperial Germany's role in the Armenian Genocide, important is the revealing of the German officers in Turkey during the First World War.

The aim of it is to certify the fact that some German officers have not only approved the measures taken by the Young Turks towards the Armenians, but have also actively participated in the implementation of the Genocide and in suppressing the self-defensive actions of the Armenians.

Հոդվածում քննարկվում է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կայսերական Գերմանիայի զինվորականների դերակատարությունը Հայոց Ցեղասպանության իրականացման գործում: Հայոց Ցեղասպանության ընթացքում կայսերական Գերմանիայի դերակատարության ուսումնասիրման տեսանկյունից կարևոր է առաջին աշխարհամարտի տարիներին Թուրքիայում գտնվող գերմանացի զինվորականների գործունեության վերհանումը:

Հոդվածում փորձ է արվում հաստատելու այն փաստը, որ որոշ գերմանացի զինվորականներ ոչ միայն խրախուսել են երիտթուրքերի գործողությունները հայերի հանդեպ, այլև գործուն մասնակցություն են ունեցել Ցեղասպանության իրագործման և հայկական ինքնապաշտպանական մարտերի ճնշման գործում:

Հայոց ցեղասպանության հարցում գերմանացի զինվորականների դերակատարության հարցը շարունակվում է մնալ արդիական: 2016 թ. հունիսի 2-ին Գերմանիայի խորհրդարանում¹ Բունդեսթագում, քվեարկության դրվեց և ընդունվեց «Օսմանյան կայսրությունում 101 տարի առաջ հայերի և մյուս քրիստոնյա փոքրամասնությունների ցեղասպանության և հիշատակի մասին» բանաձևի նախագիծը, որը մշակել էին իշխող կուսակցության մաս կազմող Քրիստոնեա-դեմոկրատական միությունը և Քրիստոնեա-սոցիալիստական միությունը, Սոցիալ-դեմոկրատական ու ընդդիմադիր Կանաչների կուսակցությունները:

20-րդ դարի սկզբին Գերմանիայի ռազմական աջակցությունը Օսմանյան կայսրությանը ավելի մեծացավ, որը պայմանավորված էր Մերձավոր Արևելքում գերմանացիների քաղաքական և տնտեսական շահերի ընդլայնմամբ: Բալկանյան երկրորդ պատերազմում թուրքերը կորցրին Եվրոպայում իրենց նվաճած գրեթե բոլոր տարածքները և կայսրությունը կանգնեցրին կործանման վտանգի առաջ, որը պայմանավորված էր նաև թուրքական բանակի մարտունակության և տեխնիկական հագեցվածության անբավարար վիճակով: Ուստի 1913թ. մայիսի 22-ին երիտթուրքական կառավարության պաշտոնական հրավերով Կ.Պոլիս ժամանեց գերմանական նոր զինվորական առաքելությունը Լիման ֆոն Սանդերսի գլխավորությամբ¹:

¹ Տե՛ս **Ֆիրբյուքեր Генрих**, Армения 1915, Уничтожение Турцией культурного народа, (ответственный редактор и автор предисловия Вардгес Микаелян), Ереван, 1991, с. 62 :

էր, որ արտաքսումը եղել էր ռազմական միջոցառում, որը գաղտնի չէր կարող պահվել գերմանացի սպաներից և փաստորեն այս ծրագիրը ներկայացված էր եղել ֆելդմարշալ ֆոն դեր Գուլցին, որն էլ իր հավանություն էր տվել այդ հարցի շուրջ «...Ծրագիրը պաշտոնական տեսքով բավական անվտանգ էր թվացել և ըստ կառավարության հրամանի 2-րդ հոդվածի՝ բանակի հրամանատարները իրավունք ունեն ռազմական անհրաժեշտության դեպքում, նաև այն դեպքում, եթե կասկածվում է լրտեսություն և դավաճանություն, արտաքսել գյուղերի կամ քաղաքների բնակիչներին՝ առանձին կամ զանգվածաբար և բնակեցնել այլ վայրերում»¹: Այն փաստը, որ ֆելդմարշալ Գուլցը կանխավ տեղյակ է եղել հայերի տեղահանմանը, վկայում է նաև Օտտո Գյոփերտը, որը հանդիսանում էր Գերմանիայի արտգործնախարարության, որոշ ժամանակ նաև Կ.Պոլսի գերմանական դեսպանատան գաղտնի խորհրդական: Գյոփերտը գրում էր. «Կարծես հաստատված է, որ ֆոն դեր Գուլցը թուրք ռազմական նախարար Էնվերից ստացել է տեղահանման հրամանը և, թերևս, համաձայնվել է, բայց ակնհայտորեն չի հասկացել ծրագրված միջոցառման փաստացի բնույթը»²: Գերմանական կողմի այն պնդումները, որ գերմանացի զինվորականները չեն կռահել հայերի տեղահանման բուն նպատակը, չի համապատասխանում իրականությանը և պարզապես նպատակ ունեն հերքելու գերմանական սպաների մասնակցությունը այդ իրադարձություններին:

Գոյություն ունեն բազմաթիվ փաստաթղթեր, որոնք վկայում են, որ գերմանացի սպաները քաջատեղյակ են եղել հայերի տեղահանման իրական նպատակներին: Բերենք մի քանի օրինակ. կորվեաի հրամանատար Հանս Հումանը, որը նաև Կ. Պոլսում գերմանական դեսպանատան ծովային գերատեսչության ռազմական կցորդն էր և Էնվեր փաշայի մտերմներից, 1915 թ հունիսի 15-ին նշել էր. «Հայերը հիմա քիչ թե շատ բնաջնջվեցին: Դա դաժան է, բայց օգտակար», երկու օր անց Հումանը արտահայտել է հետևյալ տեսակետը. «Թուրքական կառավարությունն օգտագործում է պատերազմական ժամանակաշրջանը և Եվրոպայի հետամտած շահը՝ ամբողջ Հայկական հարցը բռնությամբ լուծելու համար»³: Հումանը Կ.Պոլսի ԱՄՆ դեսպան Մորգենթաուին ասել էր. «...Ես թուրքերին բոլորովին չեմ նախատում, որ հայերին այդպես են վերաբերվում: Ես այն կարծիքին եմ, որ նրանք լիովին իրավացի են: Առավել թույլ ժողովուրդը պետք է պարտվի: Հայերը ուզում են մասնատել Թուրքիան, նրանք այս պատերազմում թուրքերի ու գերմանացիների դեմ են, ուստի գոյատևելու իրավունք չունեն»⁴: Իսկ Վիլհելմ Սուշոնը, որ հանդիսանում էր թուրքական նավատորմի հրամանատարը, իր օրագրում 1915 թ. օգոստոսի 15-ին գրել էր հետևյալ միտքը. «Հայերի դեմ Թուրքիան գործում է հնարավոր գաղտնապահությամբ և արմատականությամբ (նրանց երեք քառորդը պետք է որ վերացած լինի): Հավանաբար այդ դրաման շուտով կավարտվի»: Իսկ օգոստոսի 19-ին նա նշել էր. «Թուրքիայի համար փրկություն կլինեք, եթե սպաներ վերջին հային»⁵: 1919թ. մարտի 19-ին գերմանացի սանիտարական ծառայության սպա Արմին Վեգները⁶ դասախոսություն կարդաց «Հայ ժողովրդի արտաքսումը դեպի անապատներ» վերնագրով, որում Վեգները հաստատում էր այն փաստը, որ գերմանացի սպաները աջակցել են հայերի արքայազններին⁷: Հեղինակը նշում էր.

Armenian Genocide in German and Austrian Sources, The Widening Circle of Genocide: A. Critical Bibliographie Review, Vol, 3, Israel Charny (ed.), New Brunswick, էջ 82, [¹ Christoph Dinkel, German Officers and the Armenian Genocide, Armenian Review, Bd. 44, 1991, S 79:](http://de.wikipedia.org/Colmar-Freiherr-von-der-Goltz:U. Ohanjanjan, 1915 թվական. Անհերքելի վկայություններ... էջ 237:</p>
</div>
<div data-bbox=)

² Գուստ Վ., Հայերի Ցեղասպանությունը 1915-1916, Եր., 2008, էջ 11:

³ Տե՛ս նշվ. աշխ., էջ 12:

⁴ Տե՛ս նշվ. աշխ., էջ 117:

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Արմին Թեոֆիլ Վեգներ (1886-1978 թթ.), 1915-1916 թթ. որպես զինվորական բժիշկ ֆոն դեր Գուլցի բանակում եղել է Միջագետքում, գերմանական մի շարք թերթերի ռազմական թղթակիցն էր, 1921 թ Բեռլինում կայացած Սողոմոն Թեհլերյանի դատավարության ժամանակ հանդես է եկել Թեհլերյանի պաշտպանությամբ: (Հայկական հարց, հանրագիտարան, Եր., 1996, էջ 433) :

⁷ Տե՛ս Christoph Dinkel, German Officers and the Armenian Genocide, Armenian Review, էջ 84:

գործերն ուղարկել Միդիաթ:Ես ուշադրություն եմ հրավիրում այն փաստերի անհամապատասխանության վրա, որ Միդիաթի ու Մարդինի (Ազիկի մոտ) միջակայքում խրամատավորված քրիստոնյաները (սիրիացիներ և մի փոքր մաս հայեր), որոնց դեմ պետք է գործեն վերոհիշյալ գործերը, ապստամբներ են համարվում, և նրանց որպես այդպիսին են վերաբերվում: Նրանք ավելի շատ այն քրիստոնյաներն են, ովքեր կարողացել են փախչել և հիմա պաշտպանում են իրենց կյանքը՝ ոչխարի պես մորթվելու փոխարեն»¹: Երբ այս առիթով աղմուկ բարձրացավ, Գուլը կտրականապես արգելեց գերմանացի սպաներին այդ գործողություններին մասնակցել (ըստ Հուլթայնի գեկուցագրի՝ նախատեսվում էր, որ «ապստամբած» վայր պետք է ժամաներ Էրզրումի փոխհյուպատոս Շոյներ-Ռիխտերն իր գորաջոկատով-(Գ. Մելքոնյան) և այդ գործը հանձնարարեց Նաջի բեյին²:

Հակահայկական հայացքներով Թուրքիայում գտնվող գերմանացի բարձրագույն սպայական անձնակազմից առավել հայտնի էին գեներալ-մայոր Բրոնզարտ ֆոն Շելենդորֆը, փոխծովակալ Վիլհելմ Սուշոնը, գնդապետ Ֆելիքս Գուզեն, փոխգնդապետ Բյոտրիխը, կապիտան-լեյտենանտ Հանս Հումանը և այլք: Նրանցից Բրոնզարտ ֆոն Շելենդորֆը, Ֆելիքս Գուզեն, Հանս Հումանը պատերազմից հետ էլ գտնում էին, որ հայերի տեղահանումները արդարացված էին³: Իսկ Հումանի հակահայկական հայացքները այնքան էին ծայրահեղ, որ անգամ 1922 թ. նա առաջարկում էր Գերմանիայից արտաքսել բոլոր հայերին⁴: Վ. Գուստը նշում է, որ ֆոն Սանդերսը, Գուզեն, Բրոնզարտը թուրքերի հակահայկական գործողությունները փորձում էին հիմնավորել հայերի ապստամբելու փաստով, սակայն նրանք, լինելով զինվորական բարձրաստիճան գործիչներ, բավական տեղեկություններ պետք է ունենային, որ այդ լուրերը թուրքական քարոզչության արդյունք են ⁵:

Ինչպես հաստատում են վերոնշյալ փաստերը, գերմանացի սպաները քաջատեղյակ են եղել երիտթուրքերի կողմից հայերի տեղահանության և կոտորածների ծրագրին: Եղած նյութերի հիման վրա կփորձենք հիմնավորել, որ գերմանացի որոշ զինվորականներ նաև անմիջական մասնակցություն են ունեցել այդ ծրագրերի իրականացմանը: Այս հարցի արնչությամբ Հ. Կայզերը նշում է, որ մայոր կոմս Էբերհարտ Վոլֆսկել ֆոն Ռայխենբերգի⁶ օրինակը միակ հայտնի դեպքն է, երբ գերմանացի սպան անմիջական մասնակցություն է ունեցել հայկական կոտորածներին:⁷ Սակայն փաստերը հաստատում են, որ ֆոն Ռայխենբերգը միակ զինվորականն չի, որ անմիջական մասնակցություն է ունեցել այդ իրադարձություններին: Ավագ լեյտենանտ Բյոտրիխը, որ հանդիսանում էր թուրքական գլխավոր շտաբի երկաթուղային հաղորդակցության պետ, անձամբ ստորագրեց երկաթուղու հայ աշխատողների տեղահանման հրամանը, որը հանգեցրեց Բաղդատի երկաթուղային ընկերությունում աշխատող հազարավոր հայերի սպանության: Այս առիթով Բաղդատի երկաթուղու տնօրենի տեղակալ Ֆրանց Գյունտերը բողոքեց. «Մեր հակառակորդները մի օր շատ փող կվճարեն այդ գրավոր փաստաթուղթը ունենալու համար, քանի որ ռազմական միսիայի անդամի ստորագրությամբ նրանք կապացուցեն, որ գերմանացիները ոչ միայն ոչինչ չեն արել հայերի հալածանքները

¹ Գուստ Վ., Հայերի Ցեղասպանությունը 1915-1916, Երևան, 2008, էջ 408:

² Տե՛ս նույն տեղում կամ Վիլհելմ Բ., Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները, Անցյալը-Ցեղասպանությունները-Ներկան, Եր., 2010, էջ 102:

³ Տե՛ս **Christoph Dinkel**, German Officers and the Armenian Genocide, Armenian Review, էջ 93-99:

⁴ Տե՛ս նշվ. աշխ., էջ 115:

⁵ Տե՛ս **Gust W.**, Der Völkermord an den Armeniern. Die Tragödie des ältesten Christenvolkes der Welt, München-Wien, Corl Hans Verlag, 1993, էջ 274-275:

⁶ Երբ հրետանագործի գերմանացի սպա, կոմս Էբերհարտ Վոլֆսկել ֆոն Ռայխենբերգը թուրքական 12-րդ բանակային կորպուսի հրամանատարն էր, գեներալ Ֆահրետտինը կոչվում էր հայերի դեմ Սուսա լեռան մոտ (օգոստոս-սեպտեմբեր) և Ուրֆայում (1915 սեպտեմբեր-հոկտեմբեր): Նա հրետանակոծեց Ուրֆայի հայկական թաղամասը և կոտրեց պաշտպանությունը: Wolfdieter Bihl, Die Kaukasus-Politik der Mittelmöchte, Wien, 1975, s 178 կամ Dadrian, German Responsibility, S 136:

⁷ Տե՛ս Hilmar Kaiser,.... էջ 15:

